

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՄԱՍՏԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Ս. Ավետիսյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016թ.-ի դեկտեմբերի ___ թիվ ___ որոշմամբ
(նիստի ամսաթիվը)

Մաստարա 2016թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն
- 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն
- 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական վիճակը
- 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը
- 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական Կանխատեսումները
- 2.5. Զարգացման խոչնդոտները և դժվարությունները
- 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈԻԹՀՄ/ վերլուծություն
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
- 3.1. Համայնքի զարգացման տեսլական
- 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ
4. ՀՀԶԾ ֆինանսավորում
5. ՀՀԶԾ մոնիթորինգ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ.

Մաստարա համայնքի ղեկավարը ողջունում է Մաստարայի ազգաբնակչությանը 2017 – 2021թթ մշակված ծրագրի ընդունման և իրագործման կապակցությամբ: Հնգամյա ծրագրի հիմքում ընկած է համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի և դիրքորոշումների փոխհամաձայնեցված դրույթները, համայնքի զարգացման ուղղությունների վերաբերյալ, որոնք վերաբերվում են ավանդական մշակաբույսերի մշակության և անասնապահության զարգացմանը, ինչպես նաև նախադպրոցական կրթության և համայնքային այլ ծառայությունների մատուցման զարգացմանը:

Մաստարա համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը /այսուհետ ՀՁ ՀԾ/ նախատեսված է զարկ տալ բուսաբուծության, անասնապահության զարգացմանը: Հետևողական բարեփոխումների շնորհիվ համայնքը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և գեղեցիկ բնակավայր: Վերը նշված տեսլականին հասնելու համար համայնքի ՏԻՄ–երը և աշխատակազմը իրականացնելու են այնպիսի ռազմավարական գործունեություն, որի շնորհիվ կբարելավվեն համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, կընդլայնվեն համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակները: Բնակչությանը կիրազեկվի որոշումների կայացումը և կապահովվի նրանց մասնակցությունը: Իրազեկումը իրականացվելու է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի միջոցով:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

Մաստարա համայնքը գտնվում է սոցիալիստական և տնտեսապես վատ վիճակում :
ա/Համայնքը նախկինում օգտվել է Ախուրյանի ջրամբարից ոռոգման տակ են եղել 300հա
հողատարածք :Այժմ ոռոգման ցանցը քանդված և ավերված ,թալանված վիճակում է:
բ/Համայնքում նախկինում գործում էր կոշիկի ֆաբրիկա որտեղ աշխատում էր շուրջ 400մարդ:Այժմ
ֆաբրիկան սեփականաշնորհված է :Սեփականատերը քանդել մասնաշեները մնացել է վարչական
շենքը և շուրջ 400քմ արտադրական մակերես:
գ/Կոմունիկացիաները գտնվում են անմխիթար վիճակում:Խմելաւրի ներքին ցանրը/15կմ/ 40-60
տարվա վաղեմություն ունի և ենթակա հիմնանորոգման:Համայնքային ճանապահները անմխիթար
վիճակում են:
դ/Մշակույթային կյանքը մեռած է Մշակույթի տունը որը կառուցել 1950 ական թվականներին
ենթակա է հիմնանորոգման:

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Մաստարա համայնքը գտնվում է Թալինի տարածաշրջանում նախկին շրջկենտրոնից 8կմ հյուսիս հեռավորությունը մարզկենտրոնից 60կմ, մայրաքաղաքից 75կմ: Երևան – Գյումրի մայրուղին անցնում է 50մ հեռավորության վրա:

Համայնքը Հայաստանի հնագույն բնակավայրերից է: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1700-1750մ է : Գյուղի տարածքում պահպանվել է բազմաթիվ պատմամշակութային արժեք ունեցող հուշարձաններ:

Դրանցից նշանավորը Մաստարայի մեծ խաչքարն է /1223թ./:

Գյուղի հյուսիս արևմտյան բարձունքի վրա պահպանվել են միջնադարյան ամրոցի ավերակները և հնագույն մատուռի տեղում կառուցված Սուրբ Մտեփանոս Նախավկայի մատուռը /18-րդ դար/: Միջնադարյան Հայաստանի հնագույն և ամենակատարյալ կառույցներից մեկը Մաստարայի Սուրբ Հովհաննես եկեղեցին է /5-րդ դար/ և կանգուն է մինչև օրս: Գյուղի գերեզմանատան տարածքում կան 14-17-րդ դարերի մեկ տասնյակից ավել խաչքարեր: Մաստարայի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանից հիմնականում Ալաշկերտից և Մուշից, իսկ 1915-18թթ –ին Խնուսից, Ղարսից և այլ վայրերից:

Համայնքի բնակիչների հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, որի արդյունավետությունը բավականին ցածր է:

Գյուղում մեծ տոկոս է կազմում արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական վիճակը

Մաստարա համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է բուսաբուծությամբ և անասնապահությամբ: Սակայն ոռոգման ջրի, նոր տեխնիկայի բացակայության, պարատանյութերի քիչ օգտագործման , ֆինանսական միջոցների սղության, երաշտի և կարկտահարության պատճառով արդյունավետությունը ցածր է:

Չնայած առկա բավարար քանակությամբ վարելահողերի /2000հա/ և արոտավայերի/3000հա/ գյուղատնտեսությունը թույլ է զարգացած : Ատաղըվում է միս, կաթ , ցորեն գարի:

Համայնքում գործում է մեկ հատ պանրի արտադրամաս 15աշխատողով: Համայնքի ընդերքը հարուստ է տուֆ, բազալտ քարերով, կա նաև հրաբխային խարամի հանքավայր: Նախկինում գործող 4 քահանքներից ոչ մեկը չի գործում:

Աղյուսակ 1 համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը նկարագրող ցուցանիշներ

h/h	ցուցանիշներ	2016թ	2017թ
1	Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն	99399,1 /հազ.դրամ /	105777,9/հազ.դրամ /
2	Ընդհանուր	28,1%	30,7%

	Եկամուտների մեջ սեփական եկամուտների բաժինը		
3	Համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները և արդյունաբերական արտադրանքը հիմնական սպառման շուկաները	Պանրի արտադրամաս /1հատ/ ՀՀ	Պանրի արտադրամաս /1հատ/ ՀՀ
	Ծառայությունների ոլորտի համայնքի հիմնական ձեռնարկությունները և հիմնական ծառայությունները	4հատ /աղբահանություն, ջրամատակարարում, գազամատակարարում, էլ. էներգիա, կապ, /	4հատ /աղբահանություն, ջրամատակարարում, գազամատակարարում, էլ. էներգիա, կապ, /
	Համայնքի գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները հիմնական սպառման շուկաներ	Միս-33տ, կաթ.-525տ, հացահատիկ-1500տ, ձու-225000հատ, /ՀՀ-ում/	Միս-35տ, կաթ.-540տ, հացահատիկ-1600տ, ձու-300000հատ, /ՀՀ-ում/
	Զբոսաշրջային հետաքրքրություն և ներկայացնող բնական պատմական և մշակութային հուշարձաններ	Սուրբ Հովհաննես եկեղեցի 5-րդ դար, մատուռներ, խաչքարեր, Շենիկի ջրամբարի տարածք	Սուրբ Հովհաննես եկեղեցի 5-րդ դար, մատուռներ, խաչքարեր, Շենիկի ջրամբարի տարածք
	Դպրոցական, նախադպրոցական հաստատություններ	Մանկապարտեզ 1հատ 60տեղ, դպրոց 1հատ 340տեղ	Մանկապարտեզ 1հատ 60տեղ, դպրոց 1հատ 340տեղ

Առողջապահական հաստատություններ	1հատ բուժամբուլատորիա	1հատ բուժամբուլատորիա
Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ	101ընտանիք	90ընտանիք

2.3. Համայնքում իրականացվող ծրագրեր

<<Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի>> շինարարություն

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Համայնքում գալիք չորս տարիներին չի ակնկալվում կապիտալի գործառնություններից եկամուտների ստացում: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի և տուրքերի և մեծամասամբ ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին: Շատ ցածր է համայնքի ֆինանսական անկախության մակարդակը: Սեփական եկամուտները 2016 թ. կազմում են համայնքի բյուջեի եկամուտների 28,1 %-ը, իսկ ֆինանսական համահարթեցման դոտացիաները՝ 71,9 %-ը (աղյուսակ 2):

Համայնքի բյուջեի եկամուտների նախորդ տարիների փաստացի մակարդակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք գրեթե չեն աճում: Այդ պատճառով, թեև տեսականորեն պետք է հաջորդ տարիների եկամուտների կանխատեսման ժամանակ եկամուտների որոշակի աճ նախատեսվեր, սակայն սեփական եկամուտների մասով դա չի արվել՝ իրատեսական լինելու նպատակով: Եկամուտների աճ նապատեսվել է միայն ֆինանսական համահարթեցման դոտացիաների մասով:

Աղյուսակ 2. Համայնքի 2016 թ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021 թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	հազար դրամ						
		2016թ. նախ.	2016թ. փաստացի.	2017թ. նախ.	2018թ. Կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	99399,1	59987.7	105777.9	77750,0	80760.0	83270.0	85830.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*	62552,3	59987.7	64327,9	67750,0	70760.0	73270.0	75830.0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	11385.1	9483,2	12898,6	13750,0	14760.0	15270.0	15830.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	5044,4	4142,9	5046.0	5700,0	6210.0	6720.0	7230.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	170,9	141,2	170,9	200,0	210.0	220.0	230.0
	Հողի հարկ	4873.5	4001,7	4875.1	5500,0	6000.0	6500.0	7000.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	5800,7	4960,3	7336,6	7500,0	8000.0	8000	8000.0

					0			
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	5800,7	4960,3	5099,0	7500, 0	8000.0	8000.0	8000.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	540.0	380,0	516,0	550,0	550.0	550.0	600.0
	Տեղական տուրքեր	540.0	380,0	516,0	550,0	550.0	550.0	600.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ							
	Պետական տուրքեր							
1.5	Այլ հարկային եկամուտներ							
	Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ							
	Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ							
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՉՆԵՐ	44971,7	44971.7	44559,8	46000,0	48000,0	50000,0	52000.0
2.1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ							
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	44971,7	44971.7	44559,8	46000,0	48000,0	50000,0	56200.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	44559,8	44559,8	44559,8	46000,0	48000.0	50000,0	52000.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ							
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	411,9	411,9					
դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
2.4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ							
ա)	Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)							
բ)	ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ							
3.	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*	6195,5	5532.9	6869,5	8000,0	8000.0	8000.0	8000.0
3.1	Տոկոսներ							
3.2	Շահաբաժիններ							
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	2195,5	1023.9	2869,5	3500,0	3500.0	3500	3500.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	1095,5	1023.9	665,5	1200, 0	1200.0	1200.0	1200.0
	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ							

	Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ							
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	1100	1020.0	2204	2300	2300.0	2300.0	2300.0
3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում							
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ							
3.5	Վարչական գանձումներ							
	Տեղական վճարներ							
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ							
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ							
3.6	Մուտքեր տույժերից, տուգանքներից							
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ							
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից							
3.7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.8	Գալիսալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ							
3.9	Այլ եկամուտներ*							
	Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր							
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր							
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	4000,0	3489.0	4000.0	4500.0	4500.0	4500.0	4500.0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (1+2+3+4)							
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր							
	Շարժական գույքի իրացումից մուտքեր							
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր							
2.	Պաշարների իրացումից մուտքեր							
3.	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր							

4.	Զարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
	Հողի իրացումից մուտքեր							
	Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր							
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍ ՊԱԿԱՍՈՒՐԻ (ԴԵՖԻՑԻՏ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	36846,8	-2972,2	41450,0	10000,0	10000	10000.0	10000.0
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	36846,8	-2972,2	41450,0	10000,0	10000.0	10000.0	10000.0
1.	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-բյուջետային փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	36846,8	-2972,2	41450,0	10000,0	10000.0	10000.0	10000.0
2.1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն							
	-համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր							
	-իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր							
	-բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում							
2.2	Փոխատվություններ							
	-նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր							
	-փոխատվությունների տրամադրում							
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	36846,8	36846,8	41450,0	10000,0	10000.0	10000.0	10000.0
2.4	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս							
2.5	Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս							
2.6	Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում							
	որից՝ ծախսերի ֆինանսավորմանը							

	չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը							
Բ.	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ							
1.	ՓՈՒՍԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ							
1.1	Արժեթղթեր							
	-թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր							
	-հիմնական գումարի մարում							
1.2	Վարկեր							
	-վարկերի ստացում							
	-ստացված վարկերի հիմնական գումարի մարում							
1.3	Փոխատվություններ							
	-փոխատվությունների ստացում							
	-ստացված փոխատվությունների գումարի մարում							

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

2.5. Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Համայնքի գործարար միջավայրի բարելավման խթանմանը խոչընդոտում են ՀՀ տնտեսական վիճակը, սպառման շուկաների սահմանափակ լինելը, վարկային միջոցների բարձր տոկոսադրույքները և ցածր տոկոսադրույքներով երկարաժամկետ վարկերի բացակայությունը, հարկերի բարձր տոկոսադրույքները և հարկային արտոնությունների բացակայությունը: Համայնքում առկա գույքը /գյուղտեխնիկա/ հիմնականում ֆիզիկապես մաշված է շահագործման ենթակա չէ:

Նախադպրոցական կրթությանը խոչնդոտում է շենքային պայմանները և ֆինանսական միջոցները:

Մշակույթի տան շենքային պայմանները թույլ չեն տալիս կազմակերպելու ակտիվ մշակութային կյանք: Համայնքում չկան մարզական կառույցներ:

Աշխատատեղերի բացակայություն, ոռոգման ջրի անբավարարությունը, գյուղատնտեսության ցածր մթերատվությունը

Ֆինանսական միջոցների բացակայությանը պատճառով չի կատարվում բնակարային շինարարություն:

Ոռոգման ջրի պատճառով համայնքում կանաչապատում համարյա չի կատարվում, ֆինանսական միջոցների սղության պատճառով բարեկարգումը, կառուցապատումը, գերեզմանատան պահպանությունը գտնվում է վատ վիճակում:

Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման համար չկան ֆինանսական միջոցներ:

Գյուղատնտեսության զարգացման համար խոչընդոտ են հաղիսանում ոռոգման ջրի բացակայությունը, բնական աղետները, հնացած գյուղտեխնիկան, վառելանյութի, սերմերի պարարտանյութերի բարձր գները:

Շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող հանգամանքներից են արոտավայրերի վաղ գարնանային և ձմեռային արածեցումները:

Զբոսաշրջությանը խոչնդոտում են մնալու անհարմարությունները:

Ծնելիության և բազմազավակությանը խանգարում են սոցիալական վատ վիճակը, արտագաղթը, նոր բնակարանների կառուցման դժվարություններ:

Բնակչության առողջության պահպանմանը խոչընդոտում է վճարովի բժշկությունը:

Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությանը խոչընդոտում է տեղաշարժման անհարմարությունները:

Բարեգործությանը խոչընդոտում է ֆինանսական ճգնաժամը:

2.6. համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների /ՈՒԹՀՍ/ վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- Գյուղի Երևան Գյումրի մայրուղուն մոտ գտնվելը
 - Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները
 - Բարձրակարգ շինարանների և կոշկակարների առկայությունը
 - Վարելահողերի և արտավայրերի մեծ քանակը
 - Տուրիզմի զարգացման հնարավորությունները
 - Տուֆ քարի, բազալտի, հրաբխային խարամի հանքերի առկայությունը
 - Էկոլոգիապես մաքուր բնության և շրջակա միջավայր
 - Անասնաբուծությունը զարգացնելու հնարավորություններ
 - Բարձր որակավորված աշխատուժի առկայությունը
 - Կոշիկի ֆաբրիկայի շենքի առկայությունը
- Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի թույլ կողմերն են՝

- Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում
- Համայնքի բնակչության սոցիալ տնտեսական ոչ բարավոք վիճակը
- կոմունիկացիոն ենթակառուցվածքների /ճանապահների և ջրագծերի/ ոչ բարավոք վիճակը,
- բնակարանի կարիք ունեցող երտասարդ ընտանիքների մեծ թիվը
- Համայնքում արտադրված գյուղ մթերքների իրացման դժվարությունը
- Հարկային եկամուտների գանձման դժվարությունները
- Բակլիմայակա ոչ նպաստավոր պայմանները/Ցրտահարությունները, կարկուտը, երաշտը/
- փողոցների ոչ բարավոք վիճակը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- Բուսաբուծության զարգացում ,անասնապահություն զարգացումը
- Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- Որևէ արտադրության կազմակերպումը կոշիկի ֆաբրիկայի շենքի բազայի հիման վրա
- Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (կարկուտ, ցրտահարություն երաշտ,)
- Գործազրկության մակարդակի աճը
- Բնակֆոնդի վիճակի վատթարացումը
- Արտագաղթը

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Համայնքում իրականացվելու է այնպիսի համայնքային քաղաքականություն, որի շնորհիվ հետևողականորեն կբարելավվեն համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, կընդլայնվեն համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակները և կբարձրացվի դրանց հասանելիությունն ու մատչելիությունը, դրա համար կստեղծվեն նպաստավոր պայմաններ: Կյանքի են կոչվելու պատշաճ կառավարման սկզբունքները: Հատկապես շեշտը դրվելու է տեղական ժողովրդավարության ամրապնդման, հիմնախնդիրներին արձագանքելու պատրաստականության, հրապարակայնության և թափանցիկության, անբասիր վարքի ապահովման, հստակ ֆինանսական կառավարման, սոցիալական միասնության ապահովման, բնակչությանը իրազեկման, որոշումների կայացմանը բնակիչների մասնակցության ապահովման և հաշվետվողականության բարձրացման մեխանիզմների ներդրմանը և հետևողականորեն դրանց իրականացմանը:

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է՝

Մաստարան բնակչությանը և զբոսաշրջիկներին որակյալ ծառայություններ մատուցող և սոցիալ – տնտեսական բնականոն զարգացում ապահովող համայնք է, որտեղ զարգացած են միջազգային տուրիզմն ու էկոտուրիզմը, և որտեղ ստեղծված է ներդրումների համար մրցունակ միջավայր, իսկ բնակիչներն ապրում են բարեկեցիկ կյանքով:

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հնգամյա ժամկետում բարեփոխումներ կատարելով նախատեսվում է համայնքում հասնել հետևյալ հիմնական նպատակներին՝

- Նախադպրոցական կրթության զարգացում:
- Կրթական և մշակութային ոլորտի բարելավում և կրթօջախի բարեկարգում:
- Բուսաբուծության և անասնապահության զարգացում:
- Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման կազմակերպում, ջերմոցային տնտեսության հիմնում:
- Համայնքային ծառայությունների մատուցման բարելավում:
- Համայնքի բնակչության մշակութային կյանքի, սպորտի և հանգստի կազմակերպում:
- Ազգաբնակչության փոստային ծառայությունների ապահովում, պայմանների բարելավում:
- Գործարար միջավայրի բարելավում:

Մաստարա տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է գյուղի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, գյուղի տարածքում կարող է բնակվել առավելագույնը 5.0 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Մաստարա համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում սպասարկման, հումքային, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների եւ գործարարների համատեղ գործունեությունը:

1.1 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մաստարայի բնակչությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազել է 2782մարդ, որից 1389-ը տղամարդիկ են, 1393-ը՝ կանայք ու աղջիկներ:

Բնակչության տարիքային կազմը հետևյալն է՝

0-4 տարեկան – 160 մարդ

5-7 տարեկան – 119մարդ

8-15 տարեկան – 211 մարդ

16-62 տարեկան – 1873 մարդ

63 և ավելի տարեկան – 268 մարդ

Բնակչության սոցիալական կազմն այսպիսին է՝

- աշխատունակ բնակչություն – 1850 մարդ
- կենսաթոշակառուների թիվը – 403 , այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակառուներ՝ 288 մարդ
- հաշմանդամներ - 124 մարդ

- միակողմանի ծնողագուրկ երեխաներ – 10 մարդ
- ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներ – 7
- գործազուրկներ – 854 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 655
- ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 168 , այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը – 110:

1.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Մաստարա համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ գյուղապետն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 9 անդամներով: Մաստարա համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 9 հոգուց, ունի նաև մեկ աղբահանության և երկու ջրամատակարարման աշխատող: Գյուղապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է գյուղի կենտրոնում, շենքի ընդհանուր վիճակը բարվոք է, աշխատակազմի համար պայմանները բավարար են, կահավորանքը բավարար է: Գյուղապետարանը հագեցած է տեխնիկայով, այն բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Աղյուսակ 1. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվ	Ծավալը	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք	Այլ նշումներ
1.	Գյուղապետարանի շենք	4-րդ փող, թիվ 14 շենք	1973թթ.	292.4 քմ	Մասնակի վերանորոգված	անհրաժեշտ է վերանորոգել	
2.	Նախակրթական ուսումնական հաստատություն	Մայրուղի /փակուղի/, թիվ 23	1980թ.	450 քմ	հինանորոգված	անհրաժեշտ է	
3.	Հացահատիկի պահեստ	Նրբանցք 6, թիվ 6	1967թ.	300 քմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել	
4.	Մշակույթի տուն		1976թ.	765,89 քմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել	
5.	Խմելու ջրի ներհամայնքային	Գ. Մաստարա	1960թ.	15000 մ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել	

	ցանց						
6.	Ոռոգման ջրի ներհամայնքային ցանց	Գ. Մաստարա	1991թ.	11.71կմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է մասնակի վերանորոգել	
7	Ջրարբիացման համակարգ		2013թ.	7000մ	բարվոք		
8.	Բաղնիք		1965թ.	400 քմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել	
9.	Ներհամայնքային ճանապարհներու փողոցներ	Գ.Մաստարա	1965թ.	13500 մ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել	
10.	Փողոցային լուսավորության ցանց	1Փ.,2Փ.,3Փ.,4 Փ.,	2012թ.	4000 մ	Մի մասը ենթակա է վերանորոգման	հարդարման անհրաժեշտություն ունի	Գործող 3000մ

11	Մանկապարտեզի շենք անավարտ		1989թ.				
12	Բուժ. Ամբուլատորիայի շենք		1989թ	281,78քմ	Բարվոք	Վերանորոգված	
13	Սազմանովի անվան պուրակ		2013թ		Բարվոք	Բարվոք	
14	Ներ տնտեսային նշանակության ջրանցք			11,79կմ	Կիսաքանդ, ավերված	անհրաժեշտ է վերանորոգել	
15	Թումոյի ջրամբար		1952թ	6հա	Ենթակա է մաքրման		

1.4 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաստարա համայնքի վարչական տարածքում գործող ոչ համայնքային կազմակերպություններն են Մաստարա միջնակարգ դպրոցը և բուժ. Ամբուլատորիա ՓԲԸ, Կապի բաժանմունք: Տվյալ կազմակերպությունների հետ ՏԻՄ-երի համագործակցումով արվում է ամեն հնարավորը տվյալ ոլորտներում ծառայությունների արդիականացման և արդյունավետության բարձրացման նպատակով:

1.5 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբը տեղափոխվում և կուտակվում է կենտրոնացված աղբավայրում, որտեղ պարբերաբար կատարվում է բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է բավարար տեխնիկայի պայմաններում, կենտրոնական փողոցներում աղբամաններ են տեղադրվել , որտեղից աղբահավաք մենքենան հավաքում է:

Աղբամանների ոչ բավարար քանակը բացասաբար է անդրադառնում գյուղի արտաքին տեսքի եւ սանիտարահիգիենիկ պայմանների վրա:

1.6 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքում կա 559 առանձնատուն 78260 քմ տարածքով:

1.7 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի հողօգտագործման ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Համայնքի հողօգտագործման ցուցանիշները

Համայնքի հողերն ըստ նշանակության	Հա
Համայնքի վարչական տարածքը	6128.44
Գյուղատնտեսական հողեր	
Արոտավայր	3233.16
Վարելահողեր	2030.69
Խոտհարք	-----
Այլ հողեր	217.79
Բնակավայրերի հողեր	
Բնակելի կառուցապատման	184.21
Հասարակական կառուցապատման	6.2
Խառը կառուցապատման	
Ընդհանուր օգտագործման	31.63
Այլ հողեր	55.68
Արտադրական նշանակության հողեր	46.0
Էներգետիկայի տրանսպորտի և կայի, կոմունալ ենթակայության հողեր	23.7
Անտառային հողեր	252.76
Հատուկ պահպանության	30.0
Հատուկ նշանակության	-----
Զբաղի	16.8

1.8 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սեփականաշնորհված և վարձակալությամբ տրված վարելահողերում ցանվում են հացահատիկային մշակբույսեր՝ ցորեն, գարի, կորնգան, առվույտ և այլ կուլտուրաներ:

Հողատեսքերի դիրքադրությունը միանգամայն բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության ու անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Մաստարա համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ: Մակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն միջին զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով ու վերամշակման տեխնոլոգիաների բացակայությամբ:

1.9 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Շրջակա բնական միջավայրի պահպանության առումով առաջնային խնդիր է գյուղի սանմաքրումը:

Համայնքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- ավելացնել գյուղի կանաչապատ տարածքները,
- աղբավայրում ստեղծել աղբի տեսակավորման հնարավարություն,
- գյուղմթերքների վաճառքի համար կառուցել փակ շուկա,
- կառուցել սպանդանոց՝ կենդանիների մորթը թույլատրված նորմերում կատարելու համար,
- բարելավել և ընդարձակել ռոռզման համակարգը,
- համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,
- ավելացնել համայնքի կանաչապատ և ծաղկապատ տարածքները,
- ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում՝ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ պարբերաբար անցկացվող սեմինարների, դասընթացների, տեսագովազդների, ցուցանակների և հանրային իրազեկման այլ միջոցներով:

1.10 ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մաստարա համայնքն ունի ներհամայնքային 13.5 կմ փողոցներ և ճանապարհներ: Ճանապարհների եւ փողոցների մեծ մասն անբարեկարգ է:

Մաստարա գյուղը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի եւ պատմական հարուստ ժառանգության, հետաքրքրություն է ներկայացնում և տուրիստական համայնք վերածվելու բոլոր հնարավորություններն ունի: Մաստարայի ընդհանուր տեսքի համար չափազանց կարևոր է գյուղի բարեկարգումը՝ մայրերի բարեկարգումը, փողոցների լուսավորությունը, աղբամանների տեղադրումը, սանիտարական վիճակի ապահովումը:

Համայնքի տարածքում գիշերային (արտաքին) լուսավորության ցանցը ապահովում է գյուղի անհրաժեշտ գիշերային լուսավորության ծածկույթի 35 %-ը: Գյուղի լուսավորությունն առաջնային կարևորության հարցերից է և անհրաժեշտ է կտրուկ ընդլայնել լուսավորության ցանցը:

1.11 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մաստարա համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Գյուղում գործում են 10 խանութ, 1 հացի փուռ, 1դեղատունգազալցակայան1հատ2,հատ բենզալցակայան,1հատ շինանույթի խանութ:

1.12 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մաստարայում գործում է հանրակրթական միջնակարգ դպրոց, որը հիմնանորոգվել է: Դպրոցում սովորում է 303 աշակերտ, աշխատում՝ 38 ուսուցիչ և վարչական տեխնիկական աշխատող 15:

Համայնքում գործում համայնքային ենթակայության է 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Հաճախում է 60 սան, աշխատում է 9 մարդ: Գործում է նաև Թալինի երաժշտական դպրոցի 1 երաժշտական խմբակ, որտեղ հաճախում է 15 աշակերտ:

1.13 ՄՇԱԿՈՒՅԹ, ԵՐԻՏՍՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Գյուղը հարուստ չէ մշակութային օջախներով, որոնցից շատերը գտնվում են վթարային վիճակում: Մաստարային Մշակույթի տունը անհրաժեշտ է անհրաժեշտ է վերանորոգել, Համայնքային պատկանելիության մշակութային կառույցը վթարային է, չի գործում: Գործում է միայն բարերարի կողմից վերանորոգված Յսենյակ: Համայնքի մշակութային միջոցառումները նախատեսվում է կազմակերպել գյուղապետարանի վերանորոգված դահլիճում: Գործում է պարի խումբ հաճախում են 30 երեխա:

1.14 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ, ՍՊՈՐՏ

Համայնքում աշխատում է Մաստարայի բժշկական ամբուլատորա ՓԲԸ-ն , որը արդիական բժշկական սարքերով համալրման, կադրերի վերապատրաստման կարիք ունի: Մաստարայի բուժամբուլատորիան իրականացնում է ամբուլատոր բուժօգնություն նաև Գառնահովիթ, Ծաղկասար, Զովասար գյուղերի համար:

Գյուղապետարանը կազմակերպում և անց է կացնում ներհամայնքային ֆուտբոլի, շաշկու, շախմատի մրցումներ:

1.15 ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻՆԵՐ, ԶԲՈՍԱՅԳԻՆԵՐ, ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Համայնքում միջոցներով կառուցվել է պուրակ որտեղ տեղադրված է Հովհաննես Մազմանյանի կիսանդրին : Գործում է նաև ֆուտբոլի դաշտը:

1.16 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կան 1850 աշխատունակ մարդիկ, որոնցից 154-ը գործազուրկ են:

Համայնքի 168 ընտանիքներ հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 106 ընտանիքները:

Համայնքում բնակվում են 124 հաշմանդամներ և միակողմանի ծնողազուրկ 10 երեխա:

1.17 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Գյուղապետարանը ստեղծել է իր պաշտոնական կայքը, որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը, տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը եւ բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը: Սակայն, կայքում տեղական ինքնակառավարման վերաբերյալ տեղեկատվության առկայությունը դեռևս հեռու է բավարար

լինելուց եւ անհրաժեշտ է բարելավել կայքի աշխատանքը, բարձրացնել օպերատիվությունը: Գյուղապետարանում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

1.18 ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ: Համայնքային իշխանության ենթակառուցվածքների ներգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի մի շարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների եւ այլ ոլորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Մաստարա Քաղպաշտպանության շտաբի պետն ի պաշտոնե համարվում է գյուղապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են Քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացման գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխան որի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ:

1.19 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրը գյուղում գործող 11 մասնավոր խանութների , 1 փոերի սեփականատերերն են,գործում են նաև 1հատ ավտոգազայցակայան ,պանրի արտադրամաս, 2հատ բենգալցակայան, 1հատ դեղատուն, 1քարհանք ,որոնք նպաստում են գործարար միջավայրի ձևավորմանը:

Համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները բերված են **հավելված 1**-ում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

Համայնքի իրավիճակի վերլուծության արդյունքում վեր են հանվել մի շարք հիմնահարցեր, որոնք ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- Գյուղի կանաչապատ և ծաղկապատ տարածքների ավելացման, և բարեկարգման անհրաժեշտություն
- Ոռոգման համակարգի անբավարար վիճակ
- Համայնքում բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում բնակչության ներգրավվածության ցածր մակարդակ
- Կենդանիների մորթի իրականացման տարերայնություն
- Գյուղմթերքների իրացման դժվարություններ

- Համայնքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման անհրաժեշտություն
-
- Նախադպրոցական դաստիարակության ոլորտում ծառայությունների մատուցման համար անբավարար շենքային և գույքային պայմաններ /փոքր է,չունի խաղահրապակ/
- Գյուղի բնակֆոնդի անբարեկարգ վիճակ
-
- Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների շտաբի սենյակի նորոգման և նոր գույքով համալրման անհրաժեշտություն
- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի հիմնանորոգման անհրաժեշտություն
- Ոռոգման ջրի ներհամայնքային ցանցի վերանորոգման և նոր ցանցի կառուցման անհրաժեշտություն
- Ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակ
- Ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնման անհրաժեշտություն
- Համայնքում մատուցվող ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանման և հետագա զարգացման անհրաժեշտություն

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- Բուսաբուծության զարգացում ,անասնապահությունզարգացումը
- Գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- Որևէ արտադրության կազմակերպումը կոշիկի ֆաբրիկայի շենքի բազայի հիման վրա
- Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (կարկուտ, ցրտահարություն երաշտ,)
- Գործազրկության մակարդակի աճը
- Բնակֆոնդի վիճակի վատթարացումը
- Արտագաղթը

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Մաստաբա տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է գյուղի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, գյուղի տարածքում

կարող է բնակվել առավելագույնը 5.0 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Մաստարա համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել բնական ռեսուրսների, հիմնականում սպասարկման, հումքային, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Ջարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների եւ գործարարների համատեղ գործունեությունը:

2. ԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ (ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ) ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Մաստարայում գալիք 2017-2021 թթ. ընթացքում նախատեսվում է սերտորեն համագործակցել պետության, միջազգային կազմակերպությունների, մասնավոր սեկտորի և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Պետության կողմից ներդրումներ ապահովելու նպատակով համայնքը նախատեսում է համագործակցել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հետ՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով.

- Մշակութային կյանքի աշխուժացում
- Համայնքում գյուղատնտեսության զարգացում, ինչը ենթադրում է, օրինակ, պարարտանյութերի, սերմացուների տրամադրում, գյուղմթերքների իրացման, գյուղտեխնիկայի ձեռքբերման հնարավորությունների ստեղծում, խորհրդատվության տրամադրում և այլ միջոցառումներ
- Պետական պատվերի շրջանակներում առողջապահության և սոցիալական պաշտպանության ոլորտներում բնակչությանը հանրային ծառայությունների մատուցում
- Աղետների ռիսկի կառավարման ոլորտում համայնքի բնակչության լայն իրազեկում, համայնքի գործողությունների պլանի կազմում և իրականացում, կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում և իրականացում:

Պլանավորվող 4 տարիների ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող՝ միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ: Օրինակ, ակնկալվում է <Վորլդ Վիժն - Հայաստան> կազմակերպության աջակցությամբ համայնքի մանկապարտեզում կառուցել խաղահրապարակ:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

	Ծրագրի անվանումը	Չափի միավոր	Ծրագրի ծավալը	Ծրագրի արժեքը հազ. դր.	Ծրագրի կատարումը ըստ տարիների					Ծրագրի ֆինանս. աղբյուրը
					2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ	
1	Գյուղապետարանի շենքի վերանորոգում	հատ	1	4200.0	4200.0					Համայնքապետարան
2	Գյուղապետարանի համար մարդատար ավտոմեքենայի ձեռք բերում	հատ	1	3000.0	3000.0		-	-	-	Համայնքապետարան
3	Գյուղապետարանի համար գույքի ձեռք բերում	հատ	4	1000.0	-			-	-	Համայնքապետարան
4	Մաստարա համայնքի համար հանդիսությունների սրահի ձեռքբերում և վերանորոգում	հատ	1	30000.0	13500,0	13500.0	3000.0			Համայնքապետարան 50 %բարերարներ 50%
5	Գյուղտեխնիկայի ձեռքբերում	հատ	2	5000,0	5000,0					Համայնքապետարան
6	Մանկապարտեզի խաղահրապարակների կառուցում	քառ.մ	800	2150.0	2150.0		-	-	-	Համայնքապետարան
7	Համայնքի տարածքում զրուցարան ծածկոցների կառուցում	Հատ	3	1700,0	1700,0					Համայնքապետարան

8	Կամուրջի կառուցում	հատ	1	7100.0	7100.0					Համայնքապետարան
9	Փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում	կմ	5	30000,0	7200,0	8000.0	8000.0	4000.0	2800.0	Համայնքապետարան
10	Ոռոգման ցանցի վերանորոգում	կմ	7	100000,0	0	30000,0	30000,0	30000,0	10000,0	Համայնքապետարան 5% Պետական միջոցներ 95%
11	Փողոցների ասֆալտապատում	կմ	1	60000,0	0	15000,0	15000,0	15000,0	15000,0	Պետական միջոցներ
12	Մշակույթի տան վերանորոգում	հատ	1	150000,0	0	40000,0	60000,0	50000,0		Պետական միջոցներ 95% Համայնքային միջոցներ 5%

